ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Լուսինե Քարամյանի՝ ս.թ հունիսի 5-6-ը Ռուսաստանի Դաշնություն և Բելգիայի Թագավորություն գործուղման արդյունքների վերաբերյալ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ Լուսինե Քարամյան

- **ՔԱՂԱՔ /ԵՐԿԻՐ/ԺԱՄԿԵՏ**

Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն), 5-ը հունիսի, 2017 թ.

Բրյուսել (Բելգիայի Թագավորություն), 6-ը հունիսի, 2017 թ.

- **ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն ԱՊՀ երկրների Հումանիտար համագործակցության խորհրդի (ՀՀԽ) և Հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամի (ՀՀՄՀ) վարչության համատեղ նիստին:

Մասնակցություն Արևելյան գործընկերության 4-րդ պլատֆորմի 17-րդ հանդիպմանը:

2017 թ. հունիսի 5-ին մեկնեցի Մոսկվա՝ որպես ՀՀ մշակույթի նախարարի կողմից լիազորված ներկայացուցիչ՝ մասնակցելու ԱՊՀ երկրների Հումանիտար համագործակցության խորհրդի (ՀՀԽ) և Հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամի (ՀՀՄՀ) վարչության համատեղ նիստին:

Քննարկվեցին ՀՀՄՀ վարչության անդամների աշխատանքային որոշումները, առաջարկվեց արձանագրության մեջ ներառել 2017 թ. հունվարի 1-ից հունիսի 5-ը ՀՀՄՀ վարչության անդամների կողմից աշխատանքային կարգով ընդունված բոլոր որոշումները:

Առանձնակի ուշադրության արժանացավ ՀՀՄՀ 2016 թ. գործունեությունը և այս համատեքստում ի գիտություն ընդունվեց 2016 թ. ընթացքում իրականացված միջոցառումների վերլուծական հաշվետվությունը, վերահսկիչ մարմնի կողմից ներկայացված հաշվետվության հիման վրա հաստատվեցին ֆինանսական, ինչպես նաև Գործադիր տնօրինության ծախսերի նախահաշիվը և տարեկան հաշվետվությունները:

Անդրադառնալով ՀՀՄՀ և ՀՀԽ ընթացիկ գործունեությանը՝ նիստի մասնակիցների կողմից հաստատվեց 2017 թ. վերախմբագրված պլանը:

Քննարկվեց և հաստատվեց ՀՀՄՀ 2018 թ. գործունեությունն ու ծախսային ծրագիրը:

Մասնակիցների ուշադրությանը ներկայացվեց ՀՀՄՀ վարչության հանձնարարականների կատարողականը և ի գիտություն ընդունվեց դրա վերաբերյալ տեղեկույթը:

Քննարկվեց և հաստատվեց 2019-2020 թթ. ԱՊՀ մասնակից պետությունների հումանիտար տարիների թեմատիկան (2019 թ.՝ Գրքի տարի և 2020 թ.՝ Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 75-ամյակ):

Հումանիտար համագործակցության խորհրդի (ՀՀԽ) և ԱՊՀ մասնակից պետությունների այլ ճյուղային ոլորտների ներկայացուցիչներին առաջարկվեց կազմակերպել և անցկացնել համատեղ նիստեր: Հարցի շուրջ կայացավ Հումանիտար համագործակցության խորհրդի (ՀՀԽ) ԱՊՀ մասնակից պետությունների ներկայացուցիչների կարծիքների փոխանակում:

Այնուհետև հունիսի 6-ին մեկնեցի Բրյուսել (Բելգիայի Թագավորություն)՝ որպես նախարարության ներկայացուցիչ՝ մասնակցելու Բրյուսելում կայանալիք Արևելյան գործընկերության 4-րդ պլատֆորմի 17-րդ հանդիպմանը:

Նիստի օրակարգի առաջին հարցին համապատասխան՝ ամփոփվեցին Արևելյան գործընկերության հաջորդ հանդիպմանը նախորդող քաղաքական իրադարձությունները, ինչպես նաև ընթացիկ գործունեությունը՝ համաձայն 2020 թվականի աշխատանքային գործնական պլանի:

Քննարկվեց մշակույթի ոլորտին առնչվող քաղաքական ենթատեքստը և մշակույթի ոլորտում իրականացվելիք միջոցառումները, ամփոփվեցին համագործակցության արդյունքները:

Մասնակիցների կողմից անդրադարձ կատարվեց COMUS և «Ստեղծարար Եվրոպա» նախագծերին:

Ելույթիս մեջ ներկայացրեցի ՀՀ մշակույթի նախարարության ռազմավարական խոշոր ծրագրերը՝ առանձնակի ուշադրություն դարձնելով Հայաստան-ԵՄ համագործակցությանը, իրականացված ծրագրերին, ինչպես նաև առաջարկեցի ընդլայնել համագործակցությունը EaP-Connect մշակութային ժառանգության թվայնացման ծրագրի շրջանակներում: Հույս հայտնեցի, որ 2017 թ. վերջին հնավորություն կընձեռնվի միանալ

Creative Europe ծրագրին, ինչն իր հերթին խթան կհանդիսանա Հայաստան-Եվրոպա մշակութային համագործակցության խորացմանը և կնպաստի քաղաքացիական հասարակության ներգրավվածությանը միջազգային հեղինակավոր հարթակներում:

- **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

ԱՊՀ երկրների Հումանիտար համագործակցության խորհրդի (ՀՀԽ) և Հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամի (ՀՀՄՀ) վարչության համատեղ նիստին հաստատվեցին.

- 2017-2018 թթ. Հայաստանի կողմից ներկայացված բոլոր հայտերը,

- պայմանավորվածություն ձեռք բերվեց 2019-2020թթ. համապատասխան թեմատիկաներով հայտեր ներկայացնելու վերաբերյալ:

Արևելյան գործընկերության 4-րդ պլատֆորմի 17-րդ հանդիպմանը՝

- ներկայացվեց Հայաստանի մշակութային քաղաքականությունը Եվրամիության հետ համագործակցության համատեքստում,
- պայմանավորվածություններ ձեռք բերվեցին Արևելյան գործընկերության անդամ պետությունների հետ համատեղ հայտեր ներկայացնելու ուղղությամբ՝ Creative Europe ծրագրին միանալուց հետո:

ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի

արտաքին կապերի վարչության պետ՝ Լ. ՔԱՐԱՄՅԱՆ